

COA-ապաստանի կենտրոնների ներքին կանոնները (կանոնները)

Անվտանգության, կյանքի որակի և կառավարման համար COA-կացարաններում գործում են COA-ներքին կանոններ (կանոններ): Այդ կանոնները Նիդերլանդների լրացուցիչ օրենքներն ու կանոնակարգերն են, որոնք ուժի մեջ են COA-կացարաններում:

Դուք միշտ պետք է հետևեք COA-ի աշխատակիցների ցուցումներին և ներքին կանոններին: Ներքին կանոններին չհետևելու դեպքում, COA-ի աշխատակիցները կարող են միջոցներ կիրառել ձեր COA-ի ապաստանի կենտրոնում: Այսինքն, ձեր շաբաթական նպաստի մի մասը կպահվի որոշակի ժամանակով: Լուրջ խախտումների դեպքում COA-ն կարող է ձեզ տեղափոխել խիստ ռեժիմով COA-ի մեկ այլ կացարան: COA-ն ուստիկանությանը կդիմի որևէ հանցավոր պահվածքի դեպքում, ինչպես նաև քրեական հանցանքի դեպքում:

1. Խտրականություն, ահաբեկում և բռնություն

COA-ի ընդհանուր սկզբունքն այն է, որ ընդունման տարածքում գտնվելու ժամանակահատվածում դուք պետք է ենթարկվեք Նիդերլանդների հասարակության օրենքներին: Նիդերլանդների սահմանադրական օրենքը՝ հոդված 1-ը COA-ի համար կարևոր մեկնակետ է: Այստեղ նշված է, որ խտրականությունը՝ կրոնի, գաղափարախոսության, քաղաքական կողմնորոշման, ռասայի, սեռի կամ որևէ այլ պատճառով թույլատրելի չէ:

Ագրեսիայի կամ բռնարարի ցանկացած ձև (կամ դրանց հրահրումը) մյուսների նկատմամբ, օրինակ՝ խտրականության, սպառնության կամ միջ-ընտանեկան բռնարար խստիվ արգելված է Նիդերլանդներում, նաև COA-ի ապաստանի կենտրոններում:

Եթե դուք, օրինակ, ագրեսիայի, բռնության կամ հանցավոր սեռական ոտնձգության զոհ եք, COA-ն խորհուրդ է տալիս այդ մասին հաղորդել ուստիկանությանը: Ընտանիքի անդամը բռնի է ընտանիքի մյուս անդամների նկատմամբ: Այնուհետև COA-ն կարող է օգնություն առաջարկել: Ձեզ օգնության կարիքը կա՞, թե՞ զիտեք մեկին, ում օգնության կարիք ունի: Քննարկեք սա COA-ի աշխատողի հետ: Այնուհետև որոնվում է լավագույն հնարավոր լուծումը: Մենք վարվում ենք ձեր կողմից մեզ տրված տեղեկատվությունը զուսպ: Մենք ձեր անվտանգությունը լրջորեն ենք ընդունում: Լրացուցիչ տեղեկությունների համար տրս՝ Veilig Thuis կայքը:

2. Քաղաքական կամ կրոնական գործունեություն

COA-ն քաղաքական / կրոնականորեն մի չեզոք կազմակերպություն է: COA-ում դուք ազատ եք ձեր հավատքի կամ քաղաքական հայացքների հարցերում: Բայց մյուսները ոչ մի դեպքում ձեզ չպետք է անհանգստացնեն ձեր քաղաքական կամ կրոնական հարցերում:

3. Թմրանյութեր, ակոհոլ, զենքեր և ապօրինի առևտուր

Ապօրինի թմրանյութերն արգելված են COA-կենտրոններում: Դուք իրավունք չունեք ունենալ, վաճառել կամ օգտագործել ապօրինի թմրանյութեր: Բացահայտ արբեցողությունն արգիլված է:

Ձենքերն արգելված են: Արգելվում է զենք պահելը և զենքի առևտուրը:

4. Դեմքը ծածկող հագուստն արգելվում է

COA-ում արգելվում է հագնել դեմքը ծածկող հագուստ: Խոսքը վերաբերում է նիկար, բուրկա, բեմքը փակող գլխարկ կամ դեմքի սաղավարտ կրելուն: Այս արգելքը վերաբերում է է COA- ի աշխատակիցներին, բնակիչներին և azc այցելողներին: Արգելքը վերաբերում է COA- ի ողջ տարածքին՝ ներառյալ ձեզ տրամադրված բնակտարածությանը: Արգելքը վերաբերում է նաև դպրոցներին, խնամքի հաստատություններին և կառավարական բաժիններին: Դիմակ կրելը թույլատրվում են՝ վարակի վտանգը նվազեցնելու համար:

5. TBC-ի պարտադիր հետաքննություն

Որոշ երկրներում տարածված է վարակիչ հիվանդության տուբերկուլյոզը (TBC): Եթե դուք այս երկրներից եք, ապա ձեզանից պահանջվում է անցնել TBC- հետազոտություն: Այն ցավազուրկ է և անվնաս: Եթե տուբերկուլյոզ ունեք, դուք պետք է պարտադիր բուժում անցնեք: Տուբերկուլյոզը, ընդհանուր առմամբ, հեշտ է բուժել:

6. Meldplicht

COA-ի կենտրոնների մեծ մասում գործում է ներկայանալու պարտականությունը (meldplicht): Դուք պարտավոր եք COA-ի միջոցով նշված ժամում և կետում ներկայանալ: Պարտադիր ներկայացման մասին հատուկ տեղեկություններ կարող եք ստանալ ձեր կենտրոնի COA-ի աշխատողներից:

Եթե կան հարգելի պատճառներ, որով չեք կարող կատարել այդ պարտավորվածությունը, պետք է նախապես հայտնեք COA-ի աշխատողներին և այդ պարտավորությունից ազատվելու իրավունքի համար: Դրանից հետո կարող եք դիմել այդ պարտավորությունից (ժամանակավոր) ազատվելու համար: Դիմեք COA-ի աշխատակցին՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր՝ ապացուցելով, որ լուրջ պատճառներ ունեք և ի վիճակի չեք նշանակված ժամկետում ներկայանալ:

7. Woonruimte

COA-ում ձեզ կտրամադրվի ժամանակավոր բնակտարածություն: Այն միայն ձեր և ձեր հետ համատեղ բնակվողի համար է ձեր այստեղ բնակվելու իրավունքի ողջ ժամանակահատվածում, որտեղ իրավունք չունեք բնակեցնել մեկ ուրիշին:

Դուք իրավունք չունեք ապաստանի կենտրոնի ձեր բնակտարածությունում, շրջակայքում կամ դրանից դուրս փոփոխություններ մտցնել, կահույք բերել: Նաև, հրդեհից խուսափելու համար, տեղավորել սեփական կահույք կամ ավելացնել, օր. վարագույր, վիտրաժ և պաստառ չի թույլատրվում: Փոփոխության կամ վնասի դեպքում այն պետք է վերականգնեք, վերացնեք կամ նորոգեք սեփական ծախսերով:

Դա վերաբերում է COA-ից ստացած ձեր օգտագործելիք բոլոր իրերին:

Ձեր բնակտարածությունը պետք է մաքրեք ինքներդ: Տեղափոխության դեպքում դուք պետք է ձեր բնակտարածությունը մաքրեք՝ այն կարգին վիճակում հանձնելով COA-ին:

COA-ի իրերը տանելու իրավունք չունեք: Ապաստանի կենտրոնի, կացարանի և ողջ շրջակայքի մաքրության ու կարգին բնակվելու հարցը դրված է յուրաքանչյուրի վրա:



Ընտանի կենդանիներ պահելն արգելվում է, եթե իհարկե կենտրոնի կողմից չունեք թույլտվություն COA-կենտրոնում:

COA-ի աշխատակցին դուք պետք է թույլ տաք մուտք գործել ձեր բնակտարածություն: Մենյակային պարտադիր ստուգման, խնամքի և վերանորոգման աշխատանքների դեպքում: COA-ի աշխատակիցները կարող են առանց զգուշացման մտնել ձեր բնակտարածություն, երբ կա սպառնալիք անվտանգության և հանրային առողջության համար, օրինակ՝ վարակի ռիսկերի դեպքում:

Դա կարող է տեղ գտնել, երբ տեղափոխվեք մեկ այլ սենյակ, կամ, եթե մեկ այլ բնակչի տեղափոխեն ձեր բնակտարածություն:

8. Պարտքով ապրանքներ

Ժամանակավորապես կարող եք COA- ից վերցնել որոշակի ապրանքներ. ափսեներ, դանակներ, սպիտակեղեն կամ մանկական իրեր: Դուք պետք է վերադարձնեք այն ապրանքները, որոնք վերցրել եք պարտքով՝ COA- ի համաձայնությամբ:

9. Հրդեհի կանոնները

Հրդեհի հետևյալ կանոնները ձեր սեփական անվտանգության և այլոց համար են.

- Ինչպես ձեր բնակտարածությունում, այնպես էլ COA-ի տարածքում ծխելն արգելված է:
- Կրակ վառել, բացառությամբ խոհանոցներում գազօջախը վառելը (մոմեր, խունկ, նավթավառ և այլն) չի թույլատրվում:
- Թավաները գազօջախի վրա առանց հսկողության թողնել չի կարելի:
- Կարող եք օգտագործել միայն էլեկտրական սարքավորումներ, որոնք COA- ն համարում է անվտանգ: Այսպիսով, խնդրեք հաստատել COA- ի աշխատակցին:
- Հրդեհի հետ կապված անվտանգության որևէ նախապայմանի խախտում կամ փոփոխություն խստիվ արգելվում է: Օրինակ՝ հրդեհի ազդակը կամ նմանօրինակ մի բան անելը:
- Խստիվ արգելվում է հրդեհային դետեկտորը ծածկելը:
- Դռան սողնակը փչացնելը կամ ինքնուրույն փակվող որևէ դուռ կամ հակահրկիզային դուռը բաց թողնելը (օր. դռան տակ դրված հենակը հանել):
- Վտանգավոր էլեկտրական սարքեր և էլեկտրական սարքերի ոչ ապահով գործածումն արգելված է: Այս ամենը ըստ COA-ի աշխատակցի ցուցումների:
- Փախուստի ճանապարհը փակել՝ օր. բնակելի վայրերում երեխայի սայլակ կամ հեծանիվ դնելով կամ հրդեհի ազդակը անտեղի միացնել չի թույլատրվում:
- Ձեր բնակտարածությունում երբեք չպահեք՝ բենզին, ալկոհոլ կամ ուրիշ արագ բռնկվող որևէ նյութ:
- Չորացնող մեքենայի ֆիլտրը միշտ պետք է մաքրեք, քանի որ փոշոտ չորացնող մեքենան կարող է բռնկվել:

10. Պատասխանատվություն

COA-ն պատասխանատու չէ ձեր սեփական իրերի վնասի կամ կորստի հարցում՝ նաև, եթե վնասը պատճառել է ձեր հետ համատեղ բնակվողը կամ մեկ ուրիշը:

Դուք լիովին պատասխանատու եք COA-ի շրջանակներում ձեր պատճառած վնասի և ոչ ուշադիր օգտագործման հետևանքով փչացրած որևէ իրի համար: Նորոգման և վերականգնման վնասի փոխհատուցման ծախսերը COA-ն կդնի ձեր վրա:

Չպարզելու դեպքում, թե եղած վնասը կոնկրետ ով է պատճառել վնասի փոխհատուցումը կորվի այդ տարածքում ապրող բոլոր բնակիչների վրա: COA-ին պատկանող իրերի անհետացման կամ վնասման դեպքում COA-ն հայտագիր կներկայացնի ոստիկանությանը:

11. Աղմուկ

Դուք իրավունք չունեք աղմկել: Ժամը 22.00-ից մինչև 8.00-ը պետք է պահպանեք լռություն, որպեսզի մյուսները կարողանան հանգիստ քնել:

12. Անձնական

COA-ի բնակիչների և աշխատակիցների անձնական գաղտնիությունը: Դրա համար սահմանել ենք կանոններ՝ կապված նկարելու, ֆիլմերի և ձայնագրման հետ: Այդ կանոններն ուժի մեջ են ապաստանի բոլոր կենտրոններում՝ ինչպես բնակիչների, այնպես էլ հյուրերի համար:

13. Հյուրեր

COA-ից դուրս եկած հյուրերը պետք է ներկայանան կենտրոնի ընդունարանում՝ կենտրոնի դռնապահին կամ հսկիչին: Հյուրերը կարող են գալ ժամը 8.00-ից մինչև 22.00-ը: Դուք պարտավոր եք ձեր հյուրին ձեր մոտ տանել ընդունարանից:

Հյուրերին վերաբերող կանոններում դուք եք պատասխանատու: COA-ի ցանկացած կենտրոնում դրված է «Այցելուների կանոնակարգերի» մասին փաստաթուղթը:

14. Երեխաներ

Դուք պատասխանատու եք ձեր անչափահաս երեխաների անվտանգության և արարքների համար: Եթե ձեր երեխաները դպրոցում կամ մանկապարտեզում չեն մնում, ապա դուք պատասխանատու եք ձեր երեխաներին հսկելու համար: Դուք պետք է վճարեք ձեր անչափահաս երեխաների պատճառած վնասի համար:

Նիդերլանդներում 5-ից 18 տարեկան բոլոր երեխաները պետք է դպրոց հաճախեն: Որպես ծնող կամ խնամակալ, դուք պատասխանատու եք ձեր երեխաների դպրոց տանելու հարցում: Եթե ձեր երեխաները չեն գնում դպրոց, ապա COA- ն կամ դպրոցը կասեն այդ մասին: Դրանից հետո կարող եք ստանալ բավականին տուգանք: Infobalie-ում կարող եք հարցնել, թե ինչպես պետք է գրանցեք ձեր երեխային ձեզ մոտակա որևէ դպրոցում: